ՀԱՅԱԷՐՈՆԱՎԻԳԱՑԻԱ
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ARMATS
Closed Joint-Stock Company
АРМАЭРОНАВИГАЦИЯ
закрытое акционерное общество
AB certification

I.Gasparyan 33, Yerevan 0042, Republic of Armenia,
Tel. +374 10 292929 (366), e-mail: staff@armats.am

№ 8.1- 508

«12» 10 2023

«ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ տնօրեն
պրն. Է. Մկրտչյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի պարոն Մկրտչյան,

Հայտնում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ի (այսուհետ՝ Գնորդ) և «ՄՍ և Ընկերներ» ՍՊԸ (այսուհետ՝ Վաճառող) միջև 2023թ.-ի ապրիլի 06-ին կնքվել է <<Ապրանքի մատակարարման>> թիվ 2.66 պայմանագիրը (այսուհետ նաև Պայմանագիր): Համաձայն Պայմանագրի պահանջների Ձեր ընկերությունը ստանձնել մաքրող և փայլեցնող արտադրանքի մատակարարման պարտավորություն և այն պետք է մատակարարվեր մինչև 2023թ.-ի օգոստոսի 20-ը, սակայն էականորեն խախտելով Պայմանագիրը՝ մինչ օրս չեք կատարել Ձեր կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

Ուստի.

- համաձայն Պայմանագրի 2.1.7 կետի Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:
- Համաձայն Պայմանագրի 2.1.7.1 կետի Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ ծանուցում ենք Ձեզ, որ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն սկսած 09.10.2023թ.-ից միակողմանի լուծում է 2023թ.-ի ապրիլի 06-ին կնքված թիվ 2.66 պայմանագիրը: Միաժամանակ խնդրում ենք Պայմանագրի և որակավորման ապահովման համար նախատեսված գումարը 10 (տաս) օրվա ընթացքում փոխանցել Գնորդի Պայմանգրում նշված հաշվեհամարին:

Հարգանքով՝

Ա.Գասպարյան
Գլխավոր տնօրեն